**) Տուրակի շուտ պատռելը վնաս ե և ուշացնում ե ծննդաբերությունը մի բանի ժամով: Վորքան յերկար տուրակի մեջ մնա ջուրը, այնքան ել հեշտ կվերջանա ծննդաբերությունը: Այնպես վոր, տուրակը պատռելու պետք ե չափազանց զգուշ լինել ու չշտապել: Ծ. խմբ.

14. ԴԺՎԱՐ ԾՆՈՒՆԴ

Ուրիշ բան ե, յեթե ծնունդը տևում ե մեկ, յերկու կամ ավելի օր: Այս դեպքում արդեն կողմնակի ոգնությունն ուղղակի անհրաժեշտ ե, և զուր կը լիներ սպասել, վոր հորթը ինքն իրեն դուրս կը գա: Յեթե ժամանակին ոգնություն ցույց չը տրվի, զրանով ի դուր տեղը տանջած կլինենք կովին և վերջը կարող ենք զրկվել թե կովից և թե հորթից:

Դժվար ծնունդները պատահում են.

1. Քնքշացրած կովերին, արտառահամայան կաթնատու կովերին, վորոնք իրանց ամբողջ կյանքում պահվում են գոմում կապած:

2. Թույլ յերկունքներից: Թույլ յերկունք են ունենում ջահել կովերը, վորոնք ծնում են առաջին անգամ, կամ շատ պառաված կովերը, վորոնց վորովայնը կախ ընկած ե ու թուլացած:

3. Յերբ պտուղի տուրակը պատռվել ե շատ վաղ:

4. Յերբ հորթը մոր արգանդում պառկած ե անկանոն դիրքով:

5. Յերկվորյակ (շուխտակ) յեղած դեպքերում:

Մեր գյուղացիների կովերի մեջ դժվար ծնունդները պատահում են. —

1. Նրանից, վոր չափազանց շուտ են ցլալում յերի ջները: Պատահում են, վոր տարին ել չի լինում լրացած, նրանք արդեն ցուլալում են:

2. Վատ կերակրելուց. այդպիսի կովերի յերկունքը թույլ ե լինում, և հորթը առանց կողմնակի ոգնության չի կարողանում դուրս գալ:


Դժվար ծնելու դեպքերում ոգնություն ցույց տալիս հարկավոր ե վարվել համբերութեամբ ու մտածված, վորովհետև միայն այդ դեպքում կարելի յե հուսալ, վոր ծնունդը հաջող կը լինի: Կոպիտ ձևերը, հորթին ուժով

դուրս քաշելը վտանգավոր են ինչպես կովի, այնպես և հորթի համար:

Վորպեսզի չիմացողներն իմանան՝ թե ինչպես պետք է ոգնել դժվար ծնելու ժամանակ մինչև անասնաբույժի կամ ֆելդշերի գալը, հետևյալ նկարներում ցույց է տրված՝ թե հորթերը մոր արգանդում ինչպիսի անկանոն դրուժյուններ են ունենում և նկարագրված է ինչ պիտի անել այդպիսի դեպքերում:

15. ԳԼԽԻ ԱՆԿԱՆՈՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Դա կայանում են նրանում, վոր միայն առաջին վտաններն են անցնում հեշտոցը, իսկ գլուխը մնում է զավակատանը: Վերջին դեպքում գլուխը կամ ծոված է լինում դեպի կողմ կամ ընկած է լինում կրծքին, առաջի վտանների մեջ տեղ, կամ վորորված է, կամ, վերջապես դեպի հետ մեջքին ընկած (տես նկար 4):



Նկ. 4. Հորքը անկանոն է ծնվում: Վիզը մի կողմի վրա է ծալված:

Անկանոն դրուժյունն ուժեղ յերկունքի հետևանքն է, յերբ հեշտոցի բերանը դեռ ևս բոլորովին բացված չէ: Այս դեպքում արգանդը (զավակատունը) ձգվում է, ճրնշում հորթին, իսկ գլուխը չի կարողանում ընկնել հեշտոցը և այդ ժամանակ շուռ է դալիս: Յերբեմն դրա պատճառն այն է, վոր տուրքակը պատռվում է չափազանց վաղ:

Այդպիսի անկանոն դրուժյունները ճանաչելու համար, հարկավոր է ուշադրություն դարձնել հետևյալ յերևույթի վրա. սովորաբար նման դեպքերում առջևի յերկուն վտանները դուրս են գալիս, իսկ գլուխը դեռ ևս չի նկատվում. առջևի մի վտոր առնասարակ ավելի յե դուրս յեկած լինում, քան մյուսը:

Յեթե ձեռքով շոշափելու լինենք, կարող ենք գտնել ծոած վիզը, ապա հասնել գլխին, շոշափել աչքերն ու ականջները (տես նկար 4-րդ):

Վոչ մի կեպ չի կարելի Բաբել հորթին վոսնեից, միևնչեյ վոր գլուխը յուղղվի:

Հարյուրավոր կովեր ծնել են անհաջող լով այն պատճառով, վոր առանց գլուխը ուղղելու, առանց լավ իմանալու թե ինչ դրուժյամբ է պառկած հորթը, նրան դուրս են քաշել վտաներից:

Կովին ոգնելու համար նախ պետք հորթի գլուխը ուղղել և այնպիսի դրուժյուն տալ նրան, ինչպես վոր ցույց է տրվում 2-րդ նկարում: Հորթին, վորն արդեն քիչ է մնում վոր դուրս գա, անպատճառ պետք է յեռ մղել, ապա գլուխը դարձնել դեպի դուռը և դնել վտանների վրա: Հենց վոր գլուխը ուղղված է, հորթը վտաններից քաշելիս՝ հեշտությամբ դուրս կը գա: Այստեղ չը պետք է մոռանալ, վոր ձեռքը հետոցը մ-ցնելիս, հարկավոր է մեծ զգուշութիւն: Նախ և առաջ ձեռքը պետք է մաքուր լվանալ և յուղել, յերկրորդ՝ վոր նա յերկար յեղունգներ չունենա, վորով շատ հեշտ են չանգովում ծննդաբերական թաղանթները:

16. ԱՌՋԵՎԻ ՎՈՏՆԵՐԻ ԱՆԿԱՆՈՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ


Այդպիսի դեպքերում առջևի վոտներից մեկը կամ յերկուսը, փոխանակ ուղղակի դեպի առաջ դուրս գալու, ծալված են լինում կամ ծնկներից կամ ուսերի մոտ ու հավաքված փորի տակ, վորի շնորհիվ խանգարում են հորթին դուրս գալու հեշտոցից: Այս դրուժյամբ ուղղակի անհնարին է հանել հորթին, իսկ յեթե նա գուրս գալու լինի, անպայման մեռած դրուժյամբ միայն, իսկ մայրն էլ կարող է հիվանդանալ:

Այդ անկանոն դրուժյունը հեշտ է նկատել ծննդաբերության կանգառումից, վորի ժամանակ հեշտոցում չի յերևում առջևի վոտները, իսկ ամենահեշտ կերպով այդ բանը իմանալ կարելի յե ձեռքով շոշափելով (տես նկար 5-րդ):



Նկ 5. Հորքը աճկանոն է ծնվում.—յերկու առաջի վոտները ծալված են ծնկներում:

Ոգնություն հասցնելու համար, հարկավոր է նախ՝ առաջ յեկած հորթին նորից յետ մղել արդանդը այնքան, վոր հնարավոր լինի ձեռքով ուղղել վոտները:



Նկ. 6. Խորքը աճկանոն է ծնվում. հետվը դեպի առաջ, չորս վոտներն էլ փորի տակ ծալված:

Յերբ հորթը յետ է մղված, ձեռքով բռնում են կոճուկը (կապուկը) և զգուշաբար ուղղում վոտը, սկզբում՝ մեկը, ապա և մյուսը: Հենց վոր վոտները ուղղված են, բավական է թեթե մեկնել ու այնպես անել, վորպեսզի գլուխը նրա վրա դրված լինի այնպես, ինչպես վոր ցույց է տրված 2-րդ նկարում. այն ժամանակ հորթը առանց մեծ ջանքերի դուրս կը գա:

17. ՅԵՐԲ ՀՈՐԹԸ ՊԱՌԿԱԾ Ե ՀԵՏԵՎԻ ՄԱՍՈՎ ԴԵՊԻ ԴՐՈՒՍ, ՓՈՐԻ ՑԱԿ ԾԱԼԱԾ ՎՈՏՆԵՐՈՎ

Այս դեպքում հորթը ուղղված է դեպի դուրսը իր հետևի մասով. հետևի վոտները ծալված են ծնկներից կամ բոլորովին հավաքված են փորի տակ, ինչպես վոր այդ ցույց է տրված 6-րդ նկարի վրա: Վորպեսզի իմանանք այդ անկանոն դրուժյունը, հարկավոր է ուշադրություն դարձնել մի բանի վրա, այդ այն է, վոր

տողրակը պատուվելուց հետո ուժեղ յերկունքի ժամանակ յերևում կամ շոշափվում է միայն պոչը և հետևի անցքը: Այդպիսի դրությամբ ծնելն անհնարին է դառնում:

Իսկ բռնի ուժով, կոպտաբար քաշելու դեպքում հեշտությամբ կարող է պատուվածք առաջանալ արգանդի կամ հեշտոցի ներքևի պատի վրա:


Այդ տեսակ վնասվածքները չափազանց վտանգավոր են:

Նման դեպքերում ոգնության հասնելու համար հարկավոր է հորթին, վորը արդեն մոտեցել է ծննդաբերական անցքերին, նորից հետ մղել զավակատուն, ձեռքը տանել դեպի կոճուկը և աշխատել ուղղել վոտները այնպես, ինչպես ներկայացված է Յ-ըդ նկարում: Յերբեմն այդպիսի դեպքերում ավելի հարմար են համարում կովը պառկեցնել մեջքի վրա: Յեթե չի հաջողվում վոտներն ուղղել, իսկ հորթը այնքան էլ մեծ չէ, և կովն էլ առաջին ծինի չէ, պարանով ամուր կապում են յերկու աղդրախաղերի շուրջը, իսկ ձկած կոճախաղը ճնշում են հետ, դեպի ծննդաբերական անցքերը, դրանից հետո զգուշաբար, յերկունքի ժամանակ, պարանը քաշում են դեպի դուրս:

18. ԸՆԴՄԻՋՈՂ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընդմիջող դրության ժամանակ հորթը պառկած է լինում աջից ձախ, ըստ վորում կարող է պատահել, վոր—

1) Հորթը պառկած լինի արգանդի յերկարության հակադիր, փութն ուղղած դեպի դրսի անցքը, արգանդից հեշտոցն են մտնում կամ բոլոր չորս վոտները, կամ յերեքը, կամ յերկուսը, կամ թե չե միայն մի հատը:



Նկ. 7. Հորթը ծնվում է անկանոն, մեջքը ուղղված է դեպի դուրս

2) Հորթը շրջված է լինում մեջքով դեպի դրսի անցքը, այնպես վոր հետագոտելու ժամանակ շոշափվում է միայն մեջքի վողնաշարը (Տես Դ-ըդ նկարը):

Առաջին դեպքում ոգնություն ցույց տալու համար, պետք է առջևի վոտները դուրս քաշել հեշտոցը և պահել նրանց այդ դիրքում, հետևի վոտները հետ հրել, ապա բռնելով հորթի գլուխը ձեռքով կամ պարանոցը հագցրած կապով, զգուշաբար քաշել նրան դեպի դուրս, վորից հետո ծննդաբերությունը կվերջանա բարեհաջող: Յերկրորդ դեպքում պետք է հեշտոցը մացնել նրան ավելի մոտիկ գտնվող մասերը, գլուխը առաջին վոտների հետ կամ մարմնի հետևի մասը հետևի վոտների հետ, տալով նրանց ծննդաբերելու համար հարմարավոր դրություն:

Յերբեմն այսպես էլ է պատահում. հորթն արգանդում գտնվում է վոչ ընդմիջող դրության մեջ, այլ վերից վար, կարծես նստած լինի: Այդ դեպքում նա դե-

պի անցքն ե ուղղված լինում, կամ մեջքով (ինչպես ներկայացված ե 7-րդ նկարում), կամ վոտներով:

Այդ տեսակ անկանոն դրությունների ժամանակ, յեթե չի յեղ հաջողվում հորթը փրկել (ծնվելու ժամանակ նա կարող ե մահանալ), գոնե փրկել կարելի յե կովին: Ինչ վերաբերում ե հորթին, նա առանց կողմնակի ոգնության վոչ մի դեպքում դուրս գալ չի կարող: Ոգնություն ցույց տալիս նման դեպքերում, հարկավոր ե վարվել նույն ձևով, ինչ ձևով վոր վարվում են ընդմիջող դրության ժամանակ, աշխատելով ուղղել դեպի անցքը կամ առջևի վոտները գլխի հետ, կամ հետևի վոտները:

Ընդմիջող դրության ժամանակ ծննդաբերությունը շատ դժվար ե լինում, դրա համար ել չի կարելի առաջուց ասել, վոր նա բարեհաջող յեղք կունենա:

19. ՀՈՐԹԻ ՄՅՈՒՍ ԱՆԿԱՆՈՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատահում ե, վոր հորթը արգանդի մեջ պառկած ե լինում մեջքի վրա, վերի մասը դեպի վեր, ըստ վորում դեպի անցքը ուղղված ե՝ կամ նրա առջևի, կամ հետևի վոտները:

Այդ տեսակ անկանոն դրությունները հազվադեպ են, միևնույն ժամանակ նրանք մեծ դժվարություն չեն ներկայացնում հորթի ծնվելու համար, ուստի այստեղ չենք խոսի դրանց մասին, այլ հիշենք ելի մի քանի ուրիշ դեպքեր ել, յերբ հորթը, չնայելով, վոր մոր արգանդում պառկած ե կանոնավոր դիրքով, դարձյալ չի կարողանում դուրս գալ: Դա պատահում ե այն դեպքում, յերբ հորթը այլանդակված ե, արատավոր ե, յերբ նա չափից դուրս մեծ ե, նմանապես յեթե նա յերկվորյակ ե(ջուխտակ ե):

Յեթե համոզված ենք, վոր հորթը հանել անկարելի յե, հարկավոր ե այդ դեպքում անպատճառ դիմել ա-

նասնաբուծին կամ ֆելդշերին, վորը, յեթե չփրկի յե հորթին, գոնե, ամեն միջոց դործ կդնի, վորպեսզի կովը ապրի:

20. ՆՈՐԱԾԻՆ ՀՈՐԹԻ ԽՆԱՄԵԼԸ

Առանձին ուշադրություն պիտի դարձնել ծնելուց հետո հորթի վրա, վորովհետև առաջին շաբաթները նա թույլ ե լինում և հեշտությամբ կարող ե հիվանդանալ:

Հորթը, ինչպես հայտնի յե, ծնվում ե թաց, նրան կպած լորձուկներից, ուստի մայրը նրան լիզում ե, վորից հետո նա շուտով հորանում ե ու մաքրվում: Վորպեսզի կովը հաճույքով լիզի հորթին, ոգտակար կլինի մի բուռը աղ շաղ տալ նրա վրա,*) իսկ յեթե դրանից հետո ել նա չի լիզում, այդ դեպքում նրան պետք ե դարմանով կամ խոտով լավ սրբել մինչև վոր հորանա:

Լիզելուց հոտո, հորթը հետզհետ ե կազդուրվում ե, բայց ե անում աչքերը, գլուխը բարձրացնում ու վոտքի ե կանգնում, թեև այդ նրան հաջողվում ե վոչ միանգամից: Վոտքի կանգնելով մեկնվում ե դեպի կուրծք, բերնով վորսում ե ծծերը ու սկսում ծծել:

Վոմանք հորթին թողնում են մոր մոտ, վորպեսզի նա ինչքան ուզում ե կաթ ծծե: Ուրիշները թույլ են տալիս ծծել որեկան մի քանի անգամ միայն: Կարելի յե բոլորովին հեռու պահել նրան կովից և կերակրել կթած կաթով**):

*) Աղ շաղ տալը կովին արամադրում ե լիզելու, բայց աղը սառցնում ե կաշին, վորից հորթը կարող ե մրսել և բացի այդ լիզելու ժամանակ աղի հատիկները ցավեցնում են կաշին: Լավե բոլորովին աղ չանել կամ թեփ, այլ ցամաքացնել կաշին շորով կամ ձղնոտով: Ծան. Խմբ.

**) Չպետք ե թողնել, վոր միանգամից շատ ուտի նորածին հորթը: Կաթը (պալը) պետք ե տալ քիչ-քիչ, բայց որեկան 3-4 անգամ: Ծատ կաթ տալուց ստամոքսի խանգարում կարող ե առաջ գալ: Ծան. Խմբ.

Թեյեմ հազվադեպ յերևույթ ե, բայց պատահում ել ե, վոր կովը չի սիրում յուր հորթին, «ալմազ ե անում»*) հրում ե նրան, չի լիզում, այդպիսի դեպքերում հորթին հարկավոր ե սրբել, չորացնել: Սովորաբար այդպես են լինում այն կովերը, վորոնք դժվար են ծնել կամ բնությունից հենց չար են, սակայն դրանց ամենևին կարիք ել չկա պահելու. ցեղական նպատակների համար:**)

21. ՀՈՐԹԻՆ ԶԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծնելուց հետո առաջին օրերը մոր դուրը կամ խիժը հորթի համար ամենաառողջարար կերակուրն ե: Հորթը հենց վոր ծնվում ե, յերբեմն այն աստիճանին թուլլ ե լինում, վոր չի կարողանում ոտքի կանգնել ու մոտենալ կուրծին: Քաղծից չմեռնելու համար, նրան կերակրում են գոլ դալով մատի ոգնությամբ և այդպես կերակրում են մինչև այն ժամանակ, յերբ նա արդեն կարողանում ե կանգնել ու ծծել **):

*) «Ալմազ անող» կամ հորթին չընդունող կովի հետ պետք ե վարվել ուշադիր հոգատարությամբ: Լավ ե անմիջապես հորթը հեռացնել և պահել, վոր կովը չտեսնի հորթին մինչև ցավերն անցնելը կամ կովի հանգստանալը: Դրանից հետո կովից ծածուկ հորթը բերում են, մաքուր լվացած ձեռքը մտցնում հեշտոցի մեջ, դուրս հանում ձեռքը ու լորձոնքով քսում հորթի մարմինը և հորթը իսկույն ցույց տալիս կովին, վոր կովը լիզի: Սովորաբար դրանից հետո կովը անմիջապես ընդունում ե հորթին:

Շատ դեպքում ել առանց այդ ամենի, ալմազ անող կովը հանգստանալուց հետո (ցավը մոռանալուց հետո) նորից ընդունում ե իր հորթին: Ծան. Խմբ.

**) Կարևոր ե հիշել, վոր ծնելուց անմիջապես հորթի պորտը հարկավոր ե լվանալ 20% կարբոլյան հեղուկով կամ յեռացրած սառը ջրով: Բացի այդ հարկավոր ե հաշի բերնում կարծրացած լորձոնքը «լեզվի բալիշը»:

***) Այդպիսի դեպքերում ավելի լավ ե հորթին խտտել և մոտեցնել դունչը պտուկներին, վոր ինքը ծծի:

Ծան. Խմբ.

Դժվար ծնից հետո, յերբ կարիք ե յեղել հորթին հանել «վոտներից քաշելով», նկատվում ե վոր նրա ոսկերի ցավում եմ, վորից նա չի կարողանում վոչ կանգնել և վոչ ել ման գալ:

Դրանից վախենալու կարիք չկա, այդ ցավերը յերեք-չորս օրից հետո կանցնեն ինքն իրան:

Մորից հեռու պահած հորթերը հաճախ ծնելուց մի քանի օր հետո լուծ են ստանում. դա կարող ե պատահել զանազան պատճառներից, որինակ ցուրտ և անմաքուր կաթից, շատ կաթ ուտելուց, մրսելուց և այլն:

Յեթե այդ լուծը յերկար չի տևում, հորթերը այդ միջոցին իրանց զվարթ են զգում, ուտելու ախորժակը պահպանվում ե. յեթե թրիքը հոտած չե ու դուրս ե գնում առանց կուչ-կուչ գալու ու ցավերի, չպետք ե վախանալ, վորովհետև հորթի կյանքին վոչ մի վտանգ չի սպառնում:

Ընդհակառակը, յեթե նկատվում ե ցավեր փորում, յեթե թրիքից վատ հոտ ե գալիս, ջրիկ ե կամ արյունախառն, յեթե հորթը հիվանդոտ տեսք ունի և ուտելու ախորժակ չունի, այդ դեպքում անհրաժեշտ ե հետևյալ միջոցները ձեռք առնել. հարկավոր ե հորթին տալ որեկան մի քանի անգամ մի-մի ձու, բայց ամենից լավն ե նրան մոր տակն առնել:

Առանձնապես պետք ե յերկյուղ կրել տարափոխիկ սպիտակ լուծից, վորը կարելի չե իմանալ սպիտակ վատ հոտ ունեցող արտաթորություններից—կղկղանքից: Այս հիվանդությունը վարակիչ ե և կարող ե անցնել մի հորթից մյուսին: Այս դեպքում ամենալավը կը լիներ հիվանդին բաժանել առողջ հորթերից. վորոնք դեռևս չեն հիվանդացել, փոխադրել մի առանձին տեղ, հիվանդներին՝ մի այլ տեղ, իսկ նախկին տեղը մի քանի շաբաթ շարունակ քամահար անել: Այդ հիվանդությունը անյթան լուրջ ե և վտանգավոր, վոր անհրաժեշտ ե դիմել անասնաբույժի ոգնության:

Յերբեմն ծնվելուց քիչ ժամանակ հետո հորթը ունենում է ցավեր, ծակոցների նման. նա շուտ-շուտ մեջքը ճկում է, կուչ-կուչ է գալիս, առաջանում է փոքրկապու. քյուկ, այսինքն չի կարողանում թրքել: Դա վոչ միայն ցավ է պատճառում հորթին, այլ և միաժամանակ վտանգավոր է նրա կյանքի համար, ուստի անհրաժեշտ է անմիջապես ոգնություն ցույց տալ: Կուտակված թրիքը անհրաժեշտ է հեռացնել, յերկու-յերեք գդալ ձիթալատղի յուղ ածել բերանը կամ մի գդալ լուծողական տալ:

Մի քանի դեպքերում հորթի պորսը, յերբ նրան անզգուշությամբ պատռում են կամ կտրում են, բավականին ուռչում է (տեղի յե ունենում պորտի բորբոքում): Յեթե այդ բանը պատահում է ամառը, նրա մեջ կարող են առաջանալ վորգեր ու թարախ: Թարախը ուռած պորտից պետք է դուրս հանել սեղմելով, մաքուր գանակով մի փոքր պատռելով, պորտը լվանում են յե իացրած մաքուր գոլ ջրով և քսում նրան ամեն մի անգամ մաքուր ձյութ (մազութ):

Միշտ պետք է հիշել, վոր նոր ծնված հորթին պետք է պահպանել ցրտից, անձրևից և առհասարակ այն բոլորից, ինչ վոր կարող է վնասել նրան, ապա թե վոչ նա կարող է հիվադանալ և նույն իսկ սատկել:

22. ԿՈՎԻ ԽՆԱՄԵԼԸ ԾՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Ծնելուց հետո կովը լինում է թույլ, ուստի պետք է նրան լավ կեր տալ. կերը շուտ-շուտ տալ, բայց քիչ-քիչ: Սովորաբար ծնելուց հետո կովին տալիս են ալրի թեփից սլաքաստած փթուկ, իսկ ամառ ժամանակ՝ կանաչ խոտ: Յեթե հորթը մոր մոտ է մնում, պետք է նայել թե արդյոք մաքուր է ծծում նա կաթը. յեթե մաքուր չի ծծում, պետք է կթել: Հարկավոր է խիստ կերպով հետևել ծնելուց հետո կթելուն, վորովհետև մաքուր չը կթելը բոլորովին կը փչացնի կովին:

Լավ կթելու համար հարկավոր է սկսելուց առաջ և կթելու միջոցին, մանավանդ յերբ կովը խամածին է, քեթել կերպով ձվել կուրծք ձեռքերով: Կովն այն աստիճանի ընտելանում է մի կթող կնոջ, վոր կաթը պահում է, հենց վոր կթողն ուրիշն է, դրա համար ել լավ կը լինի, վոր միշտ միևնույն անձնավորությունը կթի:

Կթելու ժամանակ անհրաժեշտ է խիստ մաքրություն պահպանել, ինչպես և առհասարակ կաթի վերաբերմամբ, վորովհետև կաթը անմաքուր պահելիս՝ շուտով փչանում է, թթվում է: Յյուրաքանչյուր անգամ կթելուց առաջ կուրծքը հարկավոր է լվանալ գոլ ջրով, յուղ բսել և անպայման կթել մաքուր ձեռքերով, մաքուր ամանի մեջ:

Յերբեմն ծծերի կաշին կոշտանում է ու ճաքճքում, մանանավանդ ամառը, և ցավ է պատճառում կովին: Այդպիսի դեպքերում ծծերը յուղում են:


23. ԿՈՎԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Կովերը, ծնելուց հետո, յերբեմն զանազան հիվանդություններ են ստանում, որինակ. ծինի մնալը՝ կամ յե՛ս ընկնելը, արգանդի դուրս ընկնելը կուրծքի բորբոքում, ծննդաբերական ջերմ հղիության ժամանակ սպիտակ հոսում և արյունահոսություն:

Հայանի յե, վոր հաջողությամբ ծնելու դեպքում, լավ խնամք տանելու դեպքում կովերը հեշտ են ծնում, ծինը ընկնում է հորթից անմիջապես հետո, կամ ծնելուց մի յերկու ժամ անց:

Դժբախտությունն է, յեթե չի ընկնում նույնիսկ մի ուրվա ընթացքում, բայց պատահում է, վոր ծինը մնում է արգանդում՝ յերկառ ժամանակ:

Ծինի ընկնելու ուշանալու պատճառը յերբեմն լինում է կովի թուլությունը, մանավանդ դժվարությամբ ծնելուց հետո, յերբ վոր հեշտությամբ չե դուրս մղվում ծինը: Յեթե ծինը մի ուրից հետո ել չի ընկնում, ամենայն հավանա-



կանությամբ կարելի յե ասել, վոր հա կպած ե գալա-
կատանը և դուրս կգա այն ժամանակ միայն, յերբ
կը սկսի նեխվել, փթել, վորը կարելի յե իմանալ հեշ-
տոցի ողից յեկող գարշահոտից ու թարախից:

Կովին այդ հանգամանքը շատ ե անհանգստացնում.
հա շարունակ ծրմուում ե հեշտոցը, կուչ-կուչ ե գալիս,
շուտ-շուտ նայում ե փորին և յետևի վոտները դնում ե
իրարից հեռու, կարծես ուզում ե միգել: Մի քանի կո-
վեր այդ ժամանակ նվազեցնում են կաթը:

Կովին ոգնելու համար, հարկավոր ե ձեռքերը մա-
քուր լվանալ, ապա յուղ քսել (ձիթայուղ կամ ուտիսովա
յուղ), զգուշությամբ մոցնել հեշտոցը ու քաշել ախտե-
ղից ծինը. պետք ե այնպես անել, վոր գալա-
կատան գորտնուկները չը կտրվեն: Յեթե զրանից
հետո ել ծինը չի պոկվում, պետք ե զիմել անամնաբուժի
ոգնության:

Մեծ անհանգստություն կարող ե պատճառել իր տի-
րոջն այն կովը, վորի հեշտոցը ընկնում ե ծնելուց հետո:
Դա այսպես ե պատահում. ամբողջ հեշտոցը կամ նրա
մի մասը դուրս ե ընկնում կարմիր գույնի մի մեծ ու-
ռուցքի նմանությամբ: Դրա պատճառը կարող ե լինել
հեշտոցի թուլացումը, հորթի մեծ լինելը, նրա ուժեղ
ճնշումը հեշտոցի խողովակի վրա, դժվար ծննդաբերու-
թյունը կամ ծնունդի ժամանակ ցույց տրված կոպիտ
և անվարժ ոգնությունը: Յերբեմն գավակատար խողո-
վակի դուրս ընկնելը կամ կիսատ ձգվելը, լինում ե ծնե-
լուց առաջ, վորը շատ հաճախ պատահում ե խամածին
կովերին:

Կովին փրկելու համար հարկավոր ե դուրս ընկած
մասի վրայից մաքրել նրան կալած դարմանը, կեղտը,
լվանալ մաքուր սառը ջրով, այդ մասը յուղել ձեթով ու
զգուշաբար, մատներով ուղղել ու դնել յուր առաջվա
տեղը: Ուղղելուց հետո պետք ե այնպես անել, վոր կո-

վի հետևի մասը բարձր զիրք ստանա, իսկ յեթե այդպես
չանենք, հեշտոցը տեղահան կը լինի ու կը կախվի:

Ել ավելի վտանգավոր ե կովի համար արգանդի
ընկնելը. դա կայանում ե նրանում, վոր շրջված արգան-
դի մի մասը կամ ամբողջը դուրս ե գալիս հեշտոցից,
իրբե մի կարմիր մեծ ուռուցք, վորը պատած ե
լինում բուռնցքի մեծությամբ բազմաթիվ ուռուցք-
ներով կամ գորտնուկներով:

Արգանդի ընկնելը յերբեմն պատահում ե անմիջա-
պես ծնելուց հետո, յերբեմն ել ծինի բաժանվելուց մի
քանի ժամ անց: Դա կախված ե յերկունքի միջոցին չա-
փազանց ուժ տալուց և կամ ոգնություն ցույց տալու
անկարողությունից: Հենց վոր նկատվում ե դուրս ընկ-
նելը, պետք ե հոգ տանել անմիջապես իրա տեղը դնելու
և ուղղելու, այլապես, յեթե ժամանակին չարվի, դուրս
ընկնող արգանդն ավելի կը մեծանա, կը կարմրի, կան-
գալանա և այնուհետև ուղղել նրան այլևս ուշ կը լինի:

Ուղղելու համար հարկավոր ե ուռուցքի վրայից
հեռացնել կալած անմաքրությունները և լվանալ նրան
մաքուր սառը ջրով. յերբ նրա վրա դեռ մնում ե ծինը
(ընկերքը), հարկավոր ե զգուշությամբ նրան պոկել, իսկ
հետո վորպեսզի ավելի հարմար լինի ուղղել ուռուցքը
լվանում են ջրով:

Յերբ այդ ամենը կատարված ե, մեկը պետք ե պա-
հե արգանդը, իսկ մյուսը զգուշաբար ուղղելով, տեղը
դնել, նախապես ձեռները յուղելով: Ուղղումը կատար-
վում ե հետևյալ ձևով. հարկավոր ե ներս հրել արգանդի
դուրս ընկած մասը, այնպես, վոր առաջ մտնի ներսի
մասը և հետո զրսի: Վորպեսզի արգանդը յերկրորդ ան-
գամ դուրս չընկնի, պետք ե կովը կանգնեցնել այնպես,
վոր հետևի մասը մի փոքր բարձր զիրք ունենա, յեթե
կովը պառկած ե, հետևի մասի տակը պետք ե դարձան
փոել: Յերկունքի ցավերը թուլացնելու կամ պակասե-

ցնեկու նստառակով, վորոնք չափազանց խանգարում են արգանդի ուղղելուն, կովին պետք է խմեցնել 1—2 բաժակ ողի, վորից հետո նա կը թուլանա, և յերկուսքի ցավերը բավականին կը պակասեն: Ուղղելուց հետո, պետք է կովին թողնել, վոր հանգիստ կանգնած մնա: Սկզբի ժամանակներում չպետք է շատ կեր տալ, վոր պեսզի փորկապություն չունենա: Կեր պիտի տալ ալյուրից կամ թեփից պատրաստած փթուկ:

Յերբեմն կովերը, մանավանդ խամածինները, դժվար ծնելուց հետո կամ ծինը անզգուշությամբ հանելուց հետո, ստանում են մի վտանգավոր հիվանդություն, վոր կոչվում է ծննդաբերական սենդ: Ծնելուց քիչ ժամանակ հետո կովի մեջ նկատվում է տաքություն, պոգերը տաքանում են, հայելին (վերի մուկթը) չորանում է, տաքանում, նույնիսկ ճաքճքվում, կովը դժվարությամբ է շունչ քաշում, հազիվ է վոսքի վրա կանգնում, իսկ յերբեմն նույնիսկ բոլորովին չի վեր կենում տեղից, կաթ չի տալիս, ուտելու ախորժակը կորցնում է: Յերկրորդ կամ յերրորդ օրը հիվանդությունը կամ զգալի կերպով դեպի լավն է գնում և կովը քիչ-քիչ առողջանում է, կամ հիվանդությունը վաթարանում է ու կովը մահանում:

Այդ հիվանդությունը պահաջում է լուրջ բժշկության, ուստի յերևալու դեպքում հարկավոր է կարելուն չափ շուտով դիմել անասնաբուժական ոգնության:

Պատահում է, վոր կովերը ծնելուց յերկրորդ կամ յերրորդ օրը, բայց հազվադեպ է պատահում ծնելու ժամանակ, թեթև անհանգստություն են զգում. կովը մի վտից մյուսն է թեքվում, կուչ-կուչ է գալիս ու վտտերը փորին խփում, բառաչում է, կարճ ժամանակից հետո թուլություն է զգո մ վտտերում, մանավանդ հետևի վտտերում, նա որորվում է, ընկնում, աշխատում է տեղից վեր կենալ, բայց իզուր: Յետևի մասի թուլությունը

անցնում է ամբողջ մարմնին, կոյն ալև չի կարողանում վտի վրա կանգնել, շարունակ պառկած է լինում, վտտերը փորատակում կուչ է բերում կամ թե մեկնվում է, վորը սկսում է ուռչել, գլուխը մի կողքին դրած, աչքերը խուփ արած, կովը կարծես «քնած լինի», նա հեծում է, խրխուում, միաժամանակ ուռնգները լայն բաց անում: Այդպիսի դեպքերում ասում են կովը հիվանդացել է հղիության ջերմով կամ վոչ լիակատար ծննդաբերական կաթված է ստացել:

Հենց վոր յերևում են այդանակ նշաններ, այլ ևս կարիք չկա կովին կեր տալ, կամ թեփախառն ջուր տալ, նույն իսկ կարիք չկա դեղ ածել բերանը, ևս առավել, վոր նա նրա փորն ել չի գնա. կովն այդ միջոցին նույն իսկ թուրը չի կարողանում կուլ տալ, որովհետև կովի կոկորդը կաթվածահար է լինում:

Անհրաժեշտ է նրան հոքնա անել զոլ ջրով ու մաքուրի ալ միջոցով ամբողջ թրեքը, մարմնի վրա շաղ տալ սկիպիտար կամ կերոսին, ուժեղ արօրել դարմանով, խողանակով, կամ ինչով վոր լինի, ապա ծածկել նրան մի վորեն բանով, վորպեսզի տաքանա, վորովհետև այդ հիվանդության ժամանակ նա սաստիկ դող է ունենում: Այնուամենայնիվ այդ հիվանդության ժամանակ ել վորքան շուտ դիմել անասնաբուժական ոգնությունը, այնքան ավելի լավ:

Շատ հաճախ ծնելուց հետո կովերի կուրծքի բորբոսն է պատահում:

Պատճառները սրանք են. — բավաժական է միայն մաքուր չկլթել կովը կամ խփել կուրծին կամ ձմեռը միջանցուկ քամու տակ կապել, կուրծը կհիվանդանա, կառաջանա բորբոքում: Հիվանդության նշանները հետևյալն է. կուրծը մեծանում է, պնդանում, տաքանում ու ցավ տա-

լիս, կովը չի թողնում ձեռք տալու, աքացում է (քացի յե տալիս) յեթե նա գալիս է դաշտից, վոտները լայն-լայն է դնում կամ թե կաղում է: Այդ բոլորքումը լինում է հաճախ կուրծի մի քարորդ մասում, ըստ վորում ծծերը փակվում են, կարծես կաշված լինեն ծորած կաթով:

Հենց վոր նկատում են, թե կովի կուրծը ցավում է, չպետք է արտա ուղարկել նրան, այլապես վոտերով կը հարի կուրծը ու ցավը ել ավելի կաստկանա: Կովին հարկավոր է տանը թողնել հանդիսա, տակը միքիչ շատ ներքնարկ խոտ փռել, յեթե կուրծը տաք է, պետք է լվանալ սառը ջրով, ամենից լավը է սուպրակի մեջ ձյուն ածել կամ ծեծած սառույց ու կապել կուրծին: Յուրաքանչյուր յերկու ժամը մի անգամ հարկավոր է կովը կթել, բայց կաթը չպետք է տալ հորթին և վոչ ել խմել, մանավանդ վոր համեղ ել չի լինում, թանձրանում է: Հիվանդության ժամանակ կովին պետք է քիչ կեր ու թեփաջուր տալ:

Յթե հիվանդությունը յերկարում է ու կուրծը սկսում է ցրտել, պետք է տաք փաթեթներ դնել, վորի համար հարկավոր է տաք ջրով թրջել դարմանը կամ վուշի սերմերը, փաթաթել փալասի մեջ ու կապել կուրծին: Շատ տաք փաթեթներ չպետք է դնել, կաշին չայրելու համար: Կովին այդ միջոցին հարկավոր է պահել տաք զուռում կամ մի այլ տեղում, պահպանել միջանցուկ քամուց: Կուրծի սաստիկ բորբոքումը կարող է փոխվել վատ վերքի, վորից կովը կարող է մահանալ: Այդ դեպքում պետք է դիմել անասնաբուժի ոգնություն:

Յերբեմն ծնելուց հետո, մանավանդ դժվար ծնելուց հետո, հորթատելուց հետո կամ յերբ ծինը յերկար ժամանակ չի ընկնում, կովի սեռական գործարանից ծորում է կաթիլ-կաթիլ, իսկ յերբեմն ել թելի պես կախվում է հեղուկանման սպիտակ թարախ, առանց հոտի: Թարախի

հոտումը սաստկանում է, յերբ կովը պառկած է կամ միգում է: Յեթե հիվանդությունը յերկարում է, թարախը դառնում է կապտագույն և դարձահոտ, կովի պոչը միշտ կեղտոտված է լինում: Կաշում - չորանում է նրա վրա: Բժշկելու համար անհրաժեշտ է ծննդաբերական անցքը լվանալ կարբոլյան թթվուտի ջրային խառնուրդով: մի թեյի գդալ կարբոլյան թթվուտը մի բաժակ ջրի մեջ:

Հիվանդության սկզբում ուտելու ախորժակը չի կորցնում և կովը յուր արտաքին տեսքով առողջ է թվում, բայց յերբ հիվանդությունը յերկարում է, կովը հետզհետե սկսում է նիհարել: Հիվանդությունը կարող է շարունակվել յերկար տարիներով, կովը այդ ժամանակ կարող է «ցուլով դալ», բայց չբեղմնավորվել ու մնալ չբերք (ամուլ):

Պատահում էլ է, վոր ծնելուց անմիջապես հետո կովի սեռական գործարանից արյունահոսություն է սկսուվում: Դրա պատճառը լինում է ծննդաբերական շավիղների քնասվելը, արգանդից ծինը անզգույշ հանելը կամ հորթատելը:

Այսպիսի արյունահոսությունները յերբեմն վերջանում են ինքնիրան, յերբեմն կարող են մահաբեր լինել: մահաբեր կարող են լինել նայե այն պատճառով, վոր կովը շնորհիվ դրան ավելի շուտ կարող է հիվանդանալ ծննդաբերական ջերմախտով: Հենց վոր նկատվի այդ արյունահոսությունը, կովին պետք է պահել հանդիսա, իսկ գավակի վրա դնել ձյուն, սառույց կամ սառը ջրով թրջած շոր:

Ահա այն ամենը, ինչ վոր պե՛տք է իմանա ամեն մեկը, ով գործ է ունենում կովերի հետ:

Վաղուց ի վեր հայտնի է, վոր անասունների հիվանդություններից շատերը առաջանում են մարդուց իրանից, պատահում են անուշադրությունից, չիմանա-

նախուց և թերևս նույն իսկ ծուլութիւննից: Յեթե ավելի շատ հող տարվի կենդանիներին մասին, նրանց վրա ավելի շատ խնամք պորձադրվի, առաջուց կարելի յե ասել, վոր նրանք ավելի քիչ կհիվանդանան ու ավելի շատ ոգուտ կան:

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ Խ. ՅԵՐԻՅՅԱՆԻ ԽՍԲԱԳՐՈՒԹՅԱՍԲ
«ՄԱՃԿԱԼ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԵՏԵՎՅԱԼ
ԳՐՔՈՒՅԿՆԵՐԸ

Գիրք

1. Խ. ՅԵՐԻՅՅԱՆ. — Խնչպիսի սերմացու պիտի ցանկ. (սպասված) 12 »
2. Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆ. — Բամբակի և կաղամբի փաստառու-ները 12 »
3. Ն. Ն. ԲՈԳԴԱՆՈՎ. — Ընտանի կենդանիների բույր . . . 12 »
4. Գ. ԳՐԶԵԼՅԱՆ. — Բամբակի չոռ հիվանդութիւնը . . . 12 »
5. Պ. Ն. ՍՈԿՈՎՆԻՆ. — Խնչպիս պետք և կովի չորու-թյան դեմ անջրդի հողերում 12 »
6. ՊՐՈՖ. Պ. ԿՈՍՏԻՉԵՎ. — Խնչ կա հողի մեջ և լինչպի-սի հողեր են լինում 10 »
7. ԻՍ. ՏԵՐ-ՆԵՐՍԻՍՅԱՆ. — Խնձորենու փաստառուները և նրանց դեմ կովելու միջոցները 12 »

ԼՈՒՅՍ Ե ՏԵՍԵԼ

«ԳՅՈՒՂԱՑԻ ԿՈՈՊԵՐԱՏՈՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի

1. Վ. ՄԱԽՈՎ. — Կոոպերացիա և գյուղացիական տնտե-սութիւն 15 կոպ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0075211

2013



ԳԻՆՆ Ե 20 ԿՈՊ.

